**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար Գրատախտակի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/39 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/39-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի ապրիլի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Պայմանագրի առավել արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով Պայմանագրով նախատեսված որոշ ապրանքատեսակների քանակությունների փոփոխություն-ավելացում:

**Փոփոխության նկարագրություն՝** Պայմանագրի շրջանակում կատարված փոփոխությունների արդյունքում.

- Պայմանագրի 3.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «3.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 15,633,333.32 (տասնհինգ միլիոն վեց հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) ՀՀ դրամ (այսուհետ նաև՝ Պայմանագրի գին) ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:»:
- Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ով ներկայացվող աղյուսակի «ընդհանուր գինը/ՀՀ դրամ» դաշտի «15,500,000.00»-ը փոփոխվել է «15,633,333.32»-ով, իսկ «ընդհանուր քանակը» և «ենթակա քանակը» դաշտերում նշված «465»-ը փոփոխվել է «469»-ով:
- Ավելացված լրացուցիչ ֆինանսական միջոցների և քանակության համար ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ սահմանվել է 39292110/5-ն:
- Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը» սյունակով սահմանված «Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի ապրիլի 30-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները» բառերը փոփոխվել և շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի մայիսի 30-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները:
- Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի Հավելված 1.1-ի «ՑԱՆԿ՝ անհրաժեշտ քանակների»-ի աղյուսակի տեղեկատվությունը շարադրվել է նոր խմբագրությամբ համաձայն համաձայնագրի Հավելված 1-ի:
- Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի Հավելված 3-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 2)-րդ և 3)-րդ ենթակետերով սահմանված պահանջների համաձայն, ինչպես նաև հիմք ընդունելով Պայմանագրի 8.5 կետը:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ**